

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանց խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мелкъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւն ընդունուում է ամեն լեզուով:

Յայտարարութիւններ համար վճարում են
խաւաքանչիւր բառին 2 կոպեկ:

ՆԱՏԱԼԻԱ ԳՐԻԳՈՐԵԱՆ ՍՈՒՋԱՆԱՅԱՆ, Ներսէս, Յովհաննէս, Միքայէլ և Կատարինէ Սուգանաճեանները, սրտի ցաւով յայտնելով առաջինը իր ամուսնու, իսկ մնացածները իրանց հօր, Մորնու եկեղեցու ԱՒԱԳ ԲԱՆԱՅ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍՈՒՋԱՆԱՅԱՆԻ մահը, խնդրում են իրանց ազգականներին և ծանօթներին շնորհ բերել չորեքշաբթի, հոկտեմբերի 19-ին, ժամը 3-ին իրանց բնակարանը, Բոլշայա-Կրիկայա փողոց, Խոջամիսասեանցի տուն, հոգեհանգստին ներկայ գտնվելու համար իսկ յուզարկաւորութեան հանգէսը կատարվելու է հինգշաբթի, հոկտեմբերի 20-ին, առաւօտեան ժամը 10-ին, Մորնու ս. Գեորգ եկեղեցում:

1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թագաւոր Կայսրի շնորհը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տեղեկութիւններ թիւրքաց Հայաստանից. Նամակ թիւրքայից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՈՐՍՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ. ՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Անարկներ.

ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍՐԻ ՇՆՈՐՀՆԸ

“Новое Обозрѣніе” լրագիրը իր շաբաթվայ համարում հարգում է մեզ հետեւալ հետաքրքիր և վերին աստիճանի նշանաւոր տեղեկութիւնները, որոնք ապացոյց են թագաւոր Կայսրի այն հոգատարութեան, որը Նա ունի մեր երկրի վերաբերմամբ:

Անդրկովկասեան ազգերի ոգևորութիւնը դէպի իրանց Միապետը անսահման է և այդ ոգևորութիւնը աւելի էլ մեծանում է այն բարութիւնների պատճառով, որ թագաւորը ենթադրում է շնորհել մեզ: Մեր երկրի ազգերի մէջ, ասում է ուսու լրագիրը, այսուհետեւ պէտք է հաստատուի կատարեալ սեր և փոխադարձ համբարշտութիւն. մեր ազգութիւններից բարձրագոյն իշխանութիւնը չէ պահանջում որ նրանք հրաժարվեն իրանց լեզուից, կրօնից և պաշտօնի աւանդութիւններից, այլ պահանջում է միմյանց որ մենք մեր ներքին բարոյական զգացմունքներով սերտ կապերով և անձնուիրաբար կապվենք ընդհանուր

հայրենիքի և զահի հետ: Եւ բարձր իշխանութիւնը հաւատացած է մեր հաւատարմութեան վերաբերմամբ:

Եւ թագաւոր Կայսրը, ի նշան իր ողորմած հոգատարութեան մեր մասին, աչքի առջև ունենալով անդրկովկասեան ազգերի բարեկաւութիւնը, հրամայել բարեհաճեց ներկայացնել պետական բարձրագոյն հաստատութիւններին՝ մեր երկրում բարձրագոյն տէխնոլոգիական դպրոց հիմնելու ծրագրերը: Դպրոցը կունենայ և դիւլատնտեսական բաժին: Մի և նոյն ժամանակ հրամայել է զործարդել երկրի մէջ ազնւական և շինական պետական բանկերի կանոնադրութիւնները: Ուշադրութիւն է դարձնում և հարգաւորութեան ճանապարհների հարցի շուտափոյթ մշակման վրա: Ի՞նչ ասել կուզէ թէ ո՞րքան ահագին զարկ կը տրվի մեր երկրի առաջադիմութեանը այդ բոլոր բարենորոգումների իրագործմամբ, որոնք շնորհվում են մեզ թագաւոր Կայսրի ձեռքով:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հոկտեմբերի 13-ի թիւով տուած Բարձրագոյն հրովարտակով իշխան Գոնդուլով-Կորասկովին շնորհված Ս. Անդրէասի շքանշանը Նոյնպէս շնորհված են շքանշաններ հետեւեալ անձանց. Ս.

հանուր խնդրով, բանակաւորներին մէջ է մտել, բայց նրա բանակաւորները սրամտութիւններով սկսել, հայհոյանքներով շարունակել և խեղկատակութիւններով էլ վերջացել են: Փաստերը բազմաթիւ են. մենք միայն մի նորը կը յիշենք: Գեռ այս օրերս պ. Յովհաննիսեան իբր թէ բանակաւոր սկսեց Ներքինեան դպրոցի դուրսէն աւելի թով, այդ դպրոցի այժմեան տեսուչ Բեգնազարեան քահանայի հետ Բայց ինչ եղաւ դրա հետեանքը, ինչ իմացաւ պ. Յովհաննիսեանի բանակաւոր հասարակութիւնը.—ոչինչ: Որովհետեւ մեր գրագրական շաբաթաթերթի հրատարակիչը հարցը թողած սկսեց գրել թէ քահանայ չը պէտք է զրել զլիստատու Գ.—ով, այլ պէտք է զրել փոքրատաւ ք.—ով, թէ չը պէտք է զրել Բեգնազարեան, այլ պէտք է զրել Բեգնազարեան, և այդ բոլորը իբր թէ յանուն համաստեղութեան (որ թարգմանի Յովհաննիսեան) շատ է ստղում այդպիսի սրամտութիւններ և խեղկատակութիւններ անել, բայց ինչ կապ կայ նրա հետ և չորս տարվայ այդ տեսակ հանաքների և իր դէպքերի մէջ....

Իսկ ի՞նչ պ. Յովհաննիսեան կասի որ նրա իրիշխաններն են եղել լիւթիւն տալ իր անձնական փառասիրութեան,—այն ժամանակ մենք առաջինը կը գտնենք. և մեծ աջողութիւն էք դրեալ:

Եթէ «Արձագանքի» հրատարակիչը կասի, որ իր անձնական փառասիրութեանը լիւթիւն տալու համար, նրա իրիշխան է եղել խառնվել ամեն տեսակ հասարակական գործերի մէջ—մենք դրա հետ համաձայն ենք: Բայց, պարտքներ, միւթէ այդքան ընկել է իրիշխանը, որ մեր այս անիծ-

Ալեքսանդր Նիկոլով Թիֆլիսի նահանգի ազնւականների պարագլուխ իշխան Բաղդատիւն Մուխոմեովն, Ս. Վլադիմիրը երբորդ աստիճանի Թիֆլիսի քաղաքագլուխ Մատինեանին, Ս. Ստանիսլավի առաջին աստիճանի՝ Նիսավկոպովի նահանգի ներկայացուցիչ գէյսովիտելի ստատուի սովետնիկ Պոդոս Միլիք-Բեգլարեանին, Ս. Ստանիսլավի առաջին աստիճանի՝ Բագուի քաղաքագլուխ Գեւորգ-Ջինովիչին, Ս. Ստանիսլավի երբորդ աստիճանի՝ Ալապկալի քաղաքագլուխ Գ. Մուխոմեովին և Ս. Աննայի երբորդ աստիճանի Գորու քաղաքագլուխ Պ. Էլիմիրովին Բացի դրանից շնորհված են Երեւանի նահանգից եկած պատգամաւորներին երկրորդ աստիճանի Ս. Աննայի, ոչ-քրիստոնէական համար սահմանված շքանշանը՝ Ջաֆար-Ղուլի-խան Նախիւեւանկուն, և Փանահ-խան Մաքինսկուն, Ս. Աննայի երբորդ աստիճանի՝ Աբաս-Ղուլի-խան Էրվանսկուն, Ս. Ստանիսլավի երկրորդ աստիճանի՝ Բագուի-խան Էրվանսկուն և Ս. Ստանիսլավի երբորդ աստիճանի՝ Աննա-Ղաւթ-Սաղա-Պաղա-Օղուն:

Լուսւմ ենք, որ Թիֆլիսի թիւսի առաջնորդ սըր-բազան Արիստակէս Եպիսկոպոսը ամսիս 16-ին ներկայացրել է վեհափառ Կաթողիկոսին հրաժարական իր առաջնորդական պաշտօնից: Անկասկած մեզ հետ միասին Թիֆլիսի ամբողջ թիւսի հայ ժողովուրդը կը ցաւի, եթէ զրկի այնպիսի գործունէայ և եռանդոտ առաջնորդից, ինչպիսին է Արիստակէս Եպիսկոպոսը:

Մենք հաղորդել էինք, որ Վեհափառ Կաթողիկոսը մտադիր է Բորժոմ գնալ՝ Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաեւիչի հետ տեսնվելու համար: Բայց որովհետեւ այս օրերս Մեծ Իշխանը Մեծ Իշխանուհու հետ միասին Թիֆլիսում են գտնվում, ուստի Վեհափառ Կաթողիկոսը ներկայացաւ Նոյն Բարձրութիւններին Թիֆլիսում: Այցելութիւնը տեղի ունեցաւ երկաթուղու կայարանի արքայական սենեակներում և տեղից մօտ կէս ժամ:

Ինչպէս յայտնի է, տիկին Նիկիֆորովայի

ված կեանքում փառասիրութիւնն էլ իրիշխան է համարվում, կամ միթէ ամեն տեսակ անձնական դիտումներով հասարակական գործերի մէջ խառնվելը ազգային և հասարակական ծառայութիւն է:

Գուցէ պ. Յովհաննիսեան կարծել է կամ կարծում է թէ հետան և չորս տարի ազգին է ծառայել, հաղարներ ստանալով բանիկ զինվորի լինելով, գուցէ նա կարծում է թէ ժողովրդի շահերի հետ մեծ կապ ունի զանազան «Справочное Общество»-ների ազգայն լինելը: Կամ գուցէ «Փորձի» հրատարակիչը ենթադրում է, որ ընտրվելով Ներքինեան դպրոցի հոգաբարձու, կամ «Տպագրական» ու «Բարեգործական» ընկե-րութիւնների անդամ, նա շատ մեծ հասարակա-կան գործեր է կատարել, թէ և այդ դպրոցի հո-գաբարձու և այդ ընկերութեան անդամներ են եղել և շատ ուրիշ մահկանացուներ, որոնք գործել են այդ հիմնարկութիւնների օգտին, առանց հասարակական գործիչի անուն կրելու պրե-տենդիայի....

Գուցէ վերջապէս հրատարակելով «Փորձ» և «Արձագանք», և լցնելով դրանց էջերը ամեն բանով, ամեն գոյնի և ամեն հաւատի մարդկանց գրելի արտագրութիւններով, և իր անձի փառա-բանութեամբ, պ. Յովհաննիսեան կարծել է որ իրիշխանը է քաղաքում լիթէ այդ բոլորը կար-ծել է, նա շատ սխալվել է:

Բայց մեզ թվում է, որ պ. Արքայ Թովհան-նիսեան, իբրեւ Արքայ Թովհաննիսեան այդպէս էլ չի կարծի, նա լաւ գիտէ որ «Խմբագիր-հրատարա-կիչ» ստորագրելը իրիշխան քարոզել չէ, և ոչ էլ ազգին ծառայելն է. նա լաւ գիտէ, որ այնպիսի հիւ երեսին, և նոյն իսկ մեր Թիֆլիսում շատ

պաշտպանը, երբեքալ հաւատարմատար Չէմէ-սով, խնդրել էր տուել տիկին Նիկիֆորովայի գործը նահանգական դատարանից դատաստանա-կան սրկաւան անցկացնելու համար Նահանգա-կան դատարանի վճռով տիկին Նիկիֆորովա պի-տի աքսորվի Միքիլ՝ բնակութեան համար: Պաշտպանը գործը դատաստանական պալատը անցկացնելով՝ յոյս ունի բոլորովին արդարացնել մեղադրվածին: Բայց հոկտեմբերի 18-ին, ինչպէս հաղորդում են տեղական ուսու լրագիրները, տի-կին Նիկիֆորովա խնդրել է ներկայացրել նա-հանգական դատարանի պրօկուրօրին, որով խնդ-րում է իր գործը չանցկացնել պալատը, յայտ-նելով որ ինքը ապկացիայից միանգամայն հրա-ժարվում է:

Ռուսաց «Юридический Вѣстникъ» ամսագիրը իր վերջին համարում տիկին Նիկիֆորովայի գոր-ծի առիթով մի յօդուած գրելով՝ շօշափում է այն հարցը, որ ուսաց դատարանը շատ քիչ ուշա-դրութիւն է դարձնում մարդասպանների հոգե-բանական-ժառանգական յատկութիւնների վրա, և նշանակած պատժը չէ հանում իր նպատա-կին:

Հայերի և վրացիների վրա յարձակվելը կար-ծես փեշակ է դարձել մայրաքաղաքների պահա-նորդական մամուլի համար, որը մեղադրում է դոցա Աստուած գիտէ ինչերի մէջ: Բաւական է թերթի «Гражданинъ», «Русское Дѣло», «Новое Время», «Московскія Вѣдомости» և այդպի-սի լրագիրները, և շատ հետ է բազմաթիւ փաս-տեր գտնել: Նորերս էլ «Московскія Вѣдомости» լրագիրը իր մի աշխատակցի բերանով բաւական անտեղի նորութիւններ հաղորդեց հայերի վերաբերութեամբ, որոնց առիթով «Новое Ве-мя» լրագիրը ինքը մի խմբագրական յօդուած է գրել իր հոկտեմբերի 6-ի համարում: Չնայ հաս-կանում թէ որտեղից են դուրս գալիս այդպիսի տեղեկութիւնները և ինչի վրա են հիմնվում նո-րաւ:

«Խմբագիր-հրատարակիչներ» են եղել և կան, ո-րոնք նոյնքան իրիշխան են ծառայել, որքան մենք ծառայել ենք չինաց կառավարութեանը: Պ. Յովհաննիսեան շատ լաւ գիտէ՝ որ «не все круглое орѣхъ», և որ «Խմբագիր» անունը շատ անգամ ոչ թէ միայն իրիշխան և «հասարակա-կան ծառայութեան» հետ կապ չունի, այլ նոյն իսկ շատ անգամ սեպտուած է իրիշխանը և «հասարակական գործիչների» անունը: Դրա ա-պացոյց Թիֆլիսում գոյութիւն ունեցող մի քանի թերթեր՝ իրանց խմբագիր-հրատարակիչ կոչվող արարածներով....

Մեզ շատ անգամ պատահել է լսել այսպիսի դատողութիւններ. «հօ պ. Յովհաննիսեան էլի մի բան է անում. հօ նա աւելի լաւ է, քան թէ շատ ուրիշ հարուստներ. հօ նա մի գաղթել էլ է հրատարակում»:

Մենք դրան կը պատասխանենք հետեւեալը: Նախ ոչինչ նշանակութիւն չունի ամեն իրողու-թեան հետ հաշտվող ժողովրդի այդ կարծիքը, որը համոզված է մինչև անգամ, որ մեծ ազդա-տէրներ են և Թիֆլիսի այն հաստատութիւնները, որոնք իրանց գլուխներ վրա բարեհա-ճում են իրանց անունները հայերին գրել իւ-երկրորդ՝ մենք իրիշխաններ, «ազգի ծառայու-թեան» մասին խօսող մարդկանց վերաբերութեամբ իրաւունք ունենք աւելի խիստ կրիտիկա անել: Իսկ հասարակական խիստ կրիտիկայի տեսակէ-տից՝ մի մարդ, որ հրապարակ է գալիս գործե-լու, մի մարդ, որը խառնվում է հասարակական և ազգային գործերում, վերջապէս մի մարդ որ հանդէս է գալիս իբր թէ իրիշխան, և այդ բո-լորի մէջ ամենից առաջ աչքի առաջ ունի իր անձնական տեսակէտները և իր փառասիրական

(Կը շարունակվի)

ցորենից անցնել էին ընկնում տ. Գարունիս, պ. Արարիճէ և պ. Կիպիանի:

ԵՋՄԻԱՆԻՑ մեզ գրում են հետևեալը. «Հեմարանի այգիներն տեսնել Արշակ Նահապետեան թողել է հոգևոր կոչում ընդունելու մտադրութիւնը, որին նա առաջ ձգտում էր մեծ սիրով»:

Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձու հրատարակած տեղեկութիւններէն երեւում է, որ անցեալ 1887 թւի կառավարական զանազան կարգի ուսումնարանների աշակերտների թիւը հասնում էր 70,691-ի:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐԳՈՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Կ. Պոլսի ՂԱԵԼԵՅ, լրագրում կարգում ենք հետևալը. Անցեալներն այս սինակաց մէջ հրատարակեցինք Տիգրանակերտէ մեզ ուղղեալ թուրքերէն նամակ մը, որ կնու ձևի մը տակ ինչ ինչ անհաճոյ ճշմարտութիւններ կը տէր: Ի փարկը հրատարակեալ «Լա թէն Անթի» (Ս. Երկիր) անուն կրօնական թերթին մէջ վերջին թուոյն մէջ ալ կը տեսնենք դարձեալ Տիգրանակերտէ գրուած նամակ մը, որ չափազանցեալ ձևի մը տակ երևան կը հանէ վիճակ մը որ մեծապէս արժանի է Պատրիարքարանի ուշադրութեան. Պապական թղթակիցը կը գրէ:

«Տիգրանակերտ այն թեմն է ուր Հայոց ի կաթողիկոսին դարձն ամենէն աւելի ընդարձակում ստացած է վերջին ժամանակներս: Այնպէս զաղափար մը կազմել հետեւեալ մանրամասնութիւններէն:

ՊէՇտէր (փոքր գիւղ Պէշէրի գիւղախմբին մէջ) 35 լուսաւորական ընտանիքներ կաթողիկոսին ընդունեցին: Տուն մը դուր անցեալ տարի զինք Ֆերահեան Գերապետա՞ն կը պարունակէ սոյն նոր հասարակութեան առժամեայ մասնաւոր: Կրէճի 25 ընտանիք նորադարձ: Փոքր դպրոց մը բացուեցաւ այս տարին ՊէՇտէրէ, 15 ընտանիք նորադարձ. նախակրթարան: Արդէնքէ, Փոքր դպրոց մը և 15 կաթողիկոս ընտանիք: Այս չորս գիւղերու մէջ կը պաշտօնավարէ միակ զահանայ մը, Տ. Սարգիս: Ագիւ. (Մարտինի գաւառին մէջ) 60 տուն նորադարձ: Ֆերահեան գերապետա՞ն հոն գնեց տուն մը, ուր լաւագոյն սենեակներն յատկացան մատրան, եկեղեցոյն և Միսիոնէրին ընկալութեան: Զէր մուկ. 40 ընտանիք նորադարձ. հոն ևս Ֆերահեան 110 ոսկւով տուն մը գնեց նոյն նպատակօք: Զնքու. Այս կարևոր գիւղի մէջ կաթողիկոսին ընտանիք մը տարիէ հետէ հաստատեալ է: Հոն 15 նոր ընտանիքներ ևս ընդգրկեցին մեր սուրբ կրօն: Արդէն կայ գեղեցիկ եկեղեցի մը, որոյ քով դպրոց մը, թեմին լաւագոյն դպրոցներէն մին: Կը յաճախեն 80 մանկուք. կաւանդուին հայ, արաբ, թուրք և պարսիկ լեզուք ճարտար ուսուցիչ մը ձեռնամը, որ տարին 14,000 դրու թույլ կընդունին: Պաշէր. 100 ընտանիքներ վերջերս կաթողիկոսին ընդունեցին: Գլղոք, ուր կաւանդուին արաբերէն, թուրքերէն և հայերէն: Ֆիրան. Փոքր գիւղ ուր 25 ընտանիքներ կաթողիկոսին ընդունեցին հայ լուսաւորական զահանային հետ: Կրէճ տատի. Գիւղին տէրտէրը հրաժարեցաւ հերձուածէն (այսինքն կաթողիկոսին ընդունեց) 25 ընտանեաց հետ: Այս վերջին գիւղեր, ինչպէս Հայն և Կորիթ, մէկ մէկ փոքր դպրոց ունին»:

Թղթակիցն իւր լուսն զիմուք կը մատնէ երբ Ֆերահեան գերապետա՞ն դրամի տարագրական պէտք ունենալն յայտնելով, զրամական օգնութիւն կը խնդրէ փոփազանդայի գործն առաջ տանելու համար: Թէն այսպէս «Լա թէն Անթի» թղթակցութիւնը զրամական ուշադրութիւնը խոնարհագոյն կացութեան կը վերածուի, բայց իւր յիշած իրողութիւնը պէտք է գրաւեն պատրիարքարանի և եկեղեցականութեան ուշադրութիւնն, և մինչ ալ պէտք է յուսանք և մաղթենք որ նորընտիր պատրիարքին իշխանութեան օրով, ազգային-եկեղեցական կացութեան այս և այլ տկար կողմեր պատշաճ խնամքն ստանան:

Ինչպէս մեզ գրում են Կ. Պոլսից, պատրիարքարանը որոշել է պէտք եղած քննութիւնները անել և հարկաւոր միջոցները ձեռք առնել այդ բոլորի դէմ:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԳՈՅ

Կ. Պոլսի, 4 հոկտեմբերի

Յայտնի էր թէ այս տեսութիւնը պիտի յաղթանակէր և յաղթանակեց իսկ—Արդէն 50-էն աւելի երեսփոխանք այս մտքը դիւր մը ստորագրած էին, բայց այնտեղ Նուրեան, Նորատունկեան և Երեսփոխան Էֆէնդիները գրեցին հետեւեալ բանաձևն և քուէի դնել տուին—Թէպէտ և պէտք էր, որ 50 երեսփոխաններու առաջարկը քուէի դրուէր—Այն ընդունուած բանաձևը.

«Նկատելով որ Ազգ. Սահմանադրութեան 2-րդ յօդուածի արամադրած համեմատական քուէարկութեան մէջ երկու ընտրելեաց ներկայութիւնը անհրաժեշտ դատուած է:

Նկատելով որ այսօր երկու ընտրելեաց միոյն, այն է խորէն Նար-Պէյ Սրբազանի ետ քաշուելովը սոյն համեմատական քուէարկութիւնը կորուսած է իւր գործնական արժէքը:

Նկատելով որ միւս կողմանէ այսպիսի պատահականութեան մը հանդէպ Ազգ. Սահմանադրութիւնը լուս կը կենայ:

Նկատելով վերջապէս Ազգ. Ժողովոյ բացորոշ իրաւունքը վերջ տալու այս մասին ծագած վիճարանութեանց, զոր վնասաբեր կը դատէ կառավարիմը ուրեմն:

1. Մէկգիւ ձգել համեմատական քուէարկութիւնը:

2. Ձեռնարկել անմիջապէս նորոգ ընտրութեան:

Ստորագրութիւնք՝ Յ. Նուրեան, Գ. Նորատունկեան, Տ. Երեսփոխան:

Այդ բանաձևին մէջէն վերուցին նորոգ ընտրութեան ձեռնարկելու համար գործածուած անմիջապէս բառը. բայց քիչ վերջը վերստին մտափոխեցին և անմիջապէս քուէարկութեան ձեռնարկեցին, ինչ որ շատ օրինաւոր էր: Հրապարակեցին կը յայտարարէին թէ կամ Բարթոլիմէոսի, կամ Նար-Պէյի միայն քուէ պիտի տրուի, բացակայք ըստ այնմ խրկած էին իրենց քուէները, և ահա ուրիշ արդիւնք առաջ կուգայ. բայց ժողովականները չը մտածեցին թէ մեծ իրաւաստիութիւններ առաջ պիտի դնէ, եթէ այդ օրը ամեն ինչ չը վերջանայ և որովհետեւ գիտէին թէ բացակայներն ալ իրենց համակարծիք են, ուստի առանց վարանելու քուէարկութեան ձեռնարկեցին:

Արդէն հինգ ժամէն աւելի էր, որ ժողովը կը շարունակէր, առաւօտը թանձր մառախուղը պատած էր Պոլսը, այնպէս որ անհնարին էր երեսփոխանաց օրուշտ ժամանակին ներկայ դառնուիլ մայրեկեղեցին, հազիւ առաւօտին ժամ 11-ին սկսաւ ժողովը և վերջացաւ երեկոյն 3 1/2 ժամին: Քանի չափ երեսփոխանք մինչև վերջը չը կրցին մնալ և մեկնեցան. քուէարկութեան մասնակցեցան երեսփոխաններ և վեց երեսփոխանք, որոց մէջէն վաթսուս և վեց քուէներ տրուեցան Ազգ. գեան խորէն սրբաբանին, եթէ քուէ Բարթոլիմէոսի եպիսկոպոսին, երկու պարապ էին, մէկ Նար-Պէյի: Մեկնող երեսփոխաններէն շատերը յետոյ վերադարձան յայտարարելով թէ իրենք ալ կատարեալպէս համամիտ են եղած ընտրութեան և քուէներն այսպէս պիտի տալին, եթէ հոն ըլլային:

Ուր են հիմա Բարթոլիմէոսի եպիսկոպոսին երեսուն և ինը քուէները: Եթէ ատոնք արդարեւ Բարթոլիմէոսի եպիսկոպոսին արժանեացը համոզուած էին, պէտք չէր որ իրենց համոզումը փոխէին. բայց պարագայներէն ստիպեալ նոքա Բարթոլիմէոսի կողմն եղան, երբ պարագայները փոխուեցան իրենք ալ փոխուեցան, այնպէս որ եթէ խորէն սրբաբան չը հրաժարէր և Բարթոլիմէոսի եպիսկոպոս ընտրուէր, նոյն իսկ քուէարկողներուն կամոյն հակառակ պիտի ընտրուէր. տարօրինակ երևոյթ մը պիտի համարուէր:

Այժմ ընդհանուր հանգարտութիւն կայ: Կամ վաղը կամ կիրակի նախարարաց խորհուրդը նկատողութեան կառնու առդարձուած տեղեկագիրը, յետոյ կը հաղորդէ Ազգ. քուէի պալատը և կայսեր հրովարտակը կընդունուի այնուհետեւ. տալը տան և հինգ լուսն խնդրէ:

Բայց շնոր Բարթոլիմէոսիականները, թուով չորս հինգ, զանազան միջոցներով ինքնուրու կը դիմեն, բայց չենք կարծեր որ յաջողին: Նոյն իսկ մեծեպարզօր, խօսելով Միմոն պէյի հետ, ցաւ յայտնէր է, որ այս ընտրութեան պայքարի մէջ անդադար կառավարութեան անունը կը յեղիեղուի և եպիսկոպոս մ'ալ իւր կառավարութեան ընտրելի ցոյց տրուած է, մինչդեռ կառավարութիւնը ընտրելի չունի, ըսաւ չը միջամտէր պատրիարք:

ճական ընտրութեան, ու որ կուզէ թող ընտրէ հայոց ժողովը, բաւական է, որ խոհմ, պարկեշտ անձ մը ըլլայ և կառավարութեանը թշնամի յայտնուած չըլլայ:

Կառավարութեան ընթացքը ուղիղ է, մերիններն են, որ չարաչար կը գործածեն կառավարութեան անունը: Թեպէտ Երէի խնդրոյն համար ալ մեծ-եպարզօր յայտնէր է թէ՛ արուած բացատրութիւններն անհիմն են. կառավարութիւնը միջամտութիւն չընէր, այլ միայն կը զգուշացնէ խռովութիւն չը հանել, ինչպէս միշտ 16-ի նստին եղած է:

Կատական գործոց նախարարն ալ դարձաւ յայտնած է թէ ինչու այգան Բարթոլիմէոսի ետէն ինկած են ոմանք. քանի որ ազգը Բարթոլիմէոսը չուզէր, թող չընեն, որին ինչ:

Այս յայտարարութիւնները լաւ տպաւորութիւններ ըրին, և երբ սեպտեմբերի 27-ին կարգացուեցաւ կառավարական թեմը Երէն, այլ յանձնաժողով կարգուեալ խօսք չեղաւ:

Առ այժմ ոչինչ ունենք նոր:

Հայկակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Վիեննայից գրում են, որ դիմաւորական միւնիստրը նոր կարգադրութեան գործիւնամը, գործերի թիւը պէտք է աւելացիլ հինգ զորաբաժնի:

—Իրեզնից հեռագրում են, որ այս օրերս այնտեղից քաղաքներն երկու ֆրանսիացի սպաներին քաղաքական պատճառներով:

—Փարիզից եկած լուրերից երևում է, որ առհասարակ ամբողջ սառնաստրութեամբ է վերաբերում դէպի գնեթալ Բուլանտէ, և այն մի քանի ցոյցերը, որոնք տեղի ունեցան նրա առիթով իսկապէս նրա մօտիկ մարդկանց սարքած բանն է եղել:

—Արքեպիսկոպոս մտադրութիւն կայ կազմել ժողովրդական ժողովներ՝ Մակեդոնիայի խնդրը դատելու համար: Ենթադրում են, որ այդ ժողովները կազմուի են նոյն իսկ կառավարութեան ցանկութեամբ:

—Աւստրիական կառավարութիւնը իր կիսապաշտօնական օրգանների բերանով յայտնում է, որ իր քաղաքականութիւնը խաղաղասիրական է, և այս կիսապաշտօնական օրգանները նոյն իսկ իրատեսութեամբ յարձակվում են այն օտար լրագրողներին վրա, որոնք կասկածում են աւստրիական կառավարութեան պատերազմական ձեռնարկների մէջ:

—Ինչպէս երևում է, ֆրանսիական միապետականները կամենում են օգտուիլ սահմանադրութեան վերաբնութեան դէպքից՝ ներքին աղմուկներ յարուցանելու համար: Ժողովուրդին դրաւելու համար, նրանց զանազան պարագայները իրանց օրգանների միջոցով յայտնում են, որ իրանց կուսակցութիւնները միշտ կը խոնարհվեն ժողովուրդի կարելի առաջ, ինչպէս և լինի նախ թայց արդեօք կարելի է հաւատալ այդ տեսակ յայտնութիւններին:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ինչպէս յայտնի է, Շվեդիայի թագուհին սաստիկ ջղային հիւանդութիւն ունի: Որպէս զի օգոստոսի հիւանդ թագուհուն, բժիշկները խորհուրդ տուցին նրան կատարել աղախնութեամբ գիտէր, որ անհրաժեշտ է զարթնէ վաղ առաւօտեան, պէտք է հաւաքի անկողինը, և ապա սրբելով անկողինը, պէտք է ամբողջ օրը աշխատի այգիում: Բժիշկների այդ խորհուրդը լաւ հետեւանք է ունեցել: Նշատ լաւ կը լինէր, ի հարկէ, եթէ մեր բժիշկները նոյն խորհուրդը տալին և մեր կանանց, որոնք անգործութիւնից ջղային հիւանդութիւնների են ենթարկվում:

Յայտնի եպիսկոպոս Գրաֆ Նորբերգ Եպիսկոպոսի դամբարաններում գտել է թաղման պատկերների մի ամբողջ ժողովածու: Այդ պատկերներից շատերը 3000 տարի առաջ են նկարած, մեծ մասամբ փայտի վրա: Գա մի այնպիսի նշանաւոր գիտն է, որ շատերը մինչև անգամ կասկածում են նրանց իսկական լինելու մասին. բայց և այնպէս եպիսկոպոսը լքէրոս այն միտքն է յայտնել, որ նրանք իսկական են:

Այսինպէս վարդապետների թիւը այժմ հասնում է 29,220-ի, իսկ կոյսերի թիւը 25,000-ի, այսինքն մի քանի անգամ աւել քան թէ սրանից մօտ տասն տարի առաջ:

Ներկայումս Բերլինում շատ են խօսում մի արտասովոր ամուսնութեան մասին. մի մարդ և

մուսնացել է իր խորթ մօր հետ. այդ ամուսնութիւնը ապօրինի է համարված:

Վերջին տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ «Վոյապիւրկի» յօդուածը պատուօր չէլայէր չէ մեռել, ինչպէս հաղորդվեցաւ մի քանի ժամանակ առաջ լրագրողներում:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 հոկտեմբերի Արտաքին գործերի մինիստր Գիլբերտ Նորվալդ է ս. Վադիմիրի շքանշանը, I աստիճանի:

ԲՈՒՐՄԱՐՆԱՑ, 14 հոկտեմբերի «Indépendance Roumaine» լրագիրը հաղորդում է հաստատ աղբիւրից, որ Նատալիա Թագուհին, միաբուսօլիտ թէօքօսից տեղեկութիւն ստանալով ապահարգանի մասին, հեռագրեց նրան հետեւեալ. «Իմանալով ձեր վիճակը, յայտնում եմ, որ այն ամուսնութիւնը, որ կատարված էր մեր սուրբ ուղղափառ եկեղեցու օրէնքների համեմատ, չէ կարող լուծվել կառավարչական հասարակ հաղորդագրութեամբ պաշտօնական լրագրում: Ուշադրութեան առէք, որ ձեր վիճակը համարում եմ անվաւեր և ոչ մի օրինական ոյժ չունեցող»:

ՓԱՐԻԶ, 14 հոկտեմբերի: «Journal des Debats» լրագրի Բերլինի թղթակիցը, Բերլինի կիսապաշտօնական լրագրողների հերքումներին հակառակ՝ հաստատում է, որ պրինց Բատտենբերգի և Իշխանուհի Վիկտորիայի ամուսնութեան խնդիրը սկզբունքով վճռված է և որ այդ մասին շուտով կը յայտարարվի: Պրինցը կարողացաւ ստանալ Բուլգարիայից 1,800,000 ֆրանկ, որը նա պահանջում էր իր գահընկէցութեան ժամանակից:

ՓԱՐԻԶ, 14 հոկտեմբերի: Երէկ «Theatre Lyrique»-ի մէջ Բուլանտէի բարեկամները նրան ցոյցեր արեցին, որոնք փողոցում հասան կուռի հակառակորդների հետ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 հոկտեմբերի: Նոյա Կայսերական Մեծութիւնները հասան Բաթում կէսօրվայ ժամը 1-ին, իսկ ժամը երեքին «Москва» նաւով ուղևորվեցան Սեւաստօպօլ:

ԿԱԻՐԷ, 15 հոկտեմբերի: Մեծ Իշխան Սերգէյ Ալեքսանդրովիչ և Մեծ-Իշխանուհի Եկատերինա Ֆեոդորովնա հասան Ալեքսանդրիա, որտեղից պէտք է ուղևորվեն Աթէնք:

ԲԵՂԳՐԱԿ, 15 հոկտեմբերի: Այստեղ հաստատում են, որ Կ. Պոլսի պատրիարքը համաձայն է ապահարգան տալուն, թագաւորը հրովրում է սկուպչինային գումարովը դեկտեմբերի 1-ին, սահմանադրութիւնը վերաբնեւում համար, ժողովրդի սահմանադրական իրաւունքները աւելի լայնացնելու մտքով:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 հոկտեմբերի: Ս Պետերբուրգի բոլոր. Թիֆլիսի և Փոթիայի կալուածական բանկի գրաւական թերթերը 97 ր. Թիֆլիսի զաւաքային կրեդիտական ընկերութեան օրիգայինները 81 ր.:

ԲԵՂԳՐԱԿ, 15 հոկտեմբերի: Սահմանադրութեան վերաբնութեան վերաբերեալ յանձնաժողովի մէջ մտել են բոլոր կուսակցութիւնների ներկայացուցիչները. թագաւորը ժամանակաւորապէս ինքը կը նախագահէ յանձնաժողովին:

ՓԱՐԻԶ, 15 հոկտեմբերի: Սենատի հանրապետական ձախկողմնաները դէմ են սահմանադրութեան վերաբնութեան:

ԲԵՐԼԻՆ, 15 հոկտեմբերի: Բերլինի բանկը բարձրացրեց դիսկոնտը 4-ից մինչև 50/0:

ՍԵՎԱՍՏՈՊՈԼ, 17 հոկտեմբերի: Ամսիկ 15-ին, կէսօրին, Եկատերինա Կայսերի ձեռքով Նոյա Կայսերական Մեծութիւնների Օգոստոսիառ. Զաւակները, իսկ Երէկ, առաւօտեան «Մոսկվա» նաւով աշտոլութեամբ ժամանեցին Նոր. Մեծութիւնները: Այցելելով ծովային «Ժողովարան» և զօրանցները և աղ ու հաց ընդունելով քաղաքից, Նոյա Մեծութիւնները, Օգոստոսիառ. Զաւակներով, 5 ժամին կէսօրից յետոյ բարեհաճեցին հեռանալ Սեւաստօպօլից: Նոյա Մեծութիւնների դիմաւորումը հանգիստաւոր էր և սքանչելի. ժողովրդի մեծ բազմութիւնը ամեն տեղ ողջունում էր Նոյա Մեծութիւններին անընդհատ շուրաներով: Բազալքը դարձաւ զորքային բազա: ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 հոկտեմբերի: Երէկ, Շվեդիա թագուհի մօտ, Նէլայի վրա սկսվեց սառուց լուղւ. Եւրօպայի մօտ Վոլգայի վրա նոյնպէս սառուցը շարվեց:

